



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. հուլիսին /վերլուծություն/

2006թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9434 գործարքներ, որոնց քանակը 2005թ. հուլիսի համեմատ նվազել է 1.3%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 15.2%-ով:

2006թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3997 օտարման գործարքների 88.1% կազմել են առուվաճառքները, 11.2%՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 39.7%-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.1%-ը՝ հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. հուլիսին, 2006թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 11.2%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ աճել է 16.1%-ով: 2006թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. հունիսի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.8%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ՝ 9.6%-ով:

2006թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հուլիսին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2005թ.	հուլիս 2006թ.	հունիս 2006թ.
Կենտրոն	157500-540100	288000	371000	368100
Արաբկիր	112500-405100	232900	294900	291200
Քանաքեռ Զեյթուն	90000-270100	144700	176700	175500
Նոր-Նորք	90000-225100	138600	165500	164900
Ավան	99000-180000	123500	149700	146600
Էրեբունի	90000-225100	121800	145000	144700
Շենգավիթ	90000-202500	147100	178100	173400
Դավթաշեն	97700-225100	146600	182800	180900
Աջափնյակ	90000-225100	141800	165900	164600
Մալաթիա-Մեքաստիա	90000-202500	134600	162900	161500
Նուբարաշեն	58500-135000	75750	110000	108700
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>58500-540100</b>	<b>154100</b>	<b>191100</b>	<b>189100</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հուլիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ հունիսի համեմատ աճել են 1.1 %:

2006թ. հուլիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 403 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. հունիսի համեմատ նվազել է 12.6%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ աճել՝ 8.6%-ով:

2006թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հուլիսին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			հուլիս 2005թ.	հուլիս 2006թ.	հունիս 2006թ.

Արագածոտն	Աշտարակ	36000-75500	46000	61100	60200
	Ապարան	13500-39500	20700	25900	25900
	Թալին	11300-42200	20200	23900	23200
Արարատ	Արտաշատ	24800-66600	34300	47900	45400
	Մասիս	36000-71100	45400	54100	53900
	Վեդի	22500-46600	27400	37200	37200
	Արարատ	20300-53300	31000	39400	39400
Արմավիր	Վաղարշապատ	49500-111000	69000	79100	78700
	Արմավիր	27000-66600	40800	53700	52400
	Մեծամոր	18000-48900	21800	33900	33500
Գեղարքունիք	Սևան	18000-44400	26900	33000	32600
	Գավառ	13500-40000	18600	24900	24800
	Մարտունի	22500-67500	31200	38800	38600
	Վարդենիս	9000-37800	17100	21000	20300
	Ճամբարակ	5900-31100	9200	13200	13200
Լոռի	Վանաձոր	27000-88800	37300	48200	47000
	Ստեփանավան	15800-42200	20900	24800	24100
	Սյիտակ	18000-48900	22800	33400	32700
	Այվերդի	9000-35500	16400	20400	20400
	Տաշիր	11300-33300	19000	19400	19400
	Թումանյան	4100-11300	5100	5100	5100
	Շամլուղ	2300-8300	2700	2700	2700
	Ախթալա	6800-16000	10100	10100	10100
Կոտայք	Արովյան	57700-111000	71900	91500	89000
	Նոր Հաճն	40500-75500	50900	60900	60100
	Բյուրեղավան	22500-57700	32600	43000	42600
	Եղվարդ	31500-66600	43700	56100	55600
	Հրազդան	20300-48900	26900	35100	34700
	Ծաղկաձոր	18000-88800	51700	73100	71100
	Չարենցավան	24800-48900	32900	39100	38900
Շիրակ	Գյումրի	27000-88800	39300	48400	46300
	Արթիկ	15800-42200	22900	29900	29700
	Մարալիկ	8100-35500	20300	21300	21100
Սյունիք	Գորիս	22200-66600	39900	52500	51700
	Կապան	22500-46600	29100	40430	39500
	Սիսիան	18000-48900	23700	33400	32600
	Մեղրի	13500-42200	19800	27800	26500
	Ագարակ	9000-31100	16900	19900	19500
	Քաջարան	9000-40000	15800	24600	24400
	Դաստակերտ	4500-11300	6200	6200	6200
Վայոց Ձոր	Վայք	13500-48900	25300	34900	33900
	Եղեգնաձոր	24800-66600	37900	53300	52200
	Ջերմուկ	36000-88800	41400	60500	59600
Տավուշ	Դիլիջան	18000-57700	30000	42300	41500
	Իջևան	27000-72000	34100	50300	49100
	Բերդ	18000-45000	24300	29900	29700
	Նոյեմբերյան	9000-22500	13300	16600	16100

2006թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ հունիսի համեմատ աճել են 1.7 %:

2006թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 434 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 106, մյուս

մարզերում միասին վերցրած՝ 328: 2006թ. հունիսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 0.9%-ով, ընդ որում Երևանում աճել է 1.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 1.8%-ով: 2005թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 8.8%-ով, ընդ որում Երևանում նվազել է 8.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 15.9%-ով:

2006թ. հուլիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հուլիսին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		հուլիս 2005թ.	հուլիս 2006թ.	հունիս 2006թ.
Կենտրոն	135000-900200	310000	386300	383300
Արաբկիր	90000-450100	250000	299200	296300
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	150100	181000	178900
Նորք-Մարաշ	90000-450100	174500	186600	185000
Ավան	90000-360100	129500	150800	148800
Էրեբունի	67500-225100	125300	149200	147500
Շենգավիթ	67500-202500	145800	179000	175200
Դավթաշեն	90000-405100	152500	185300	183300
Աջափնյակ	67500-270100	148100	169200	167000
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	140300	166300	164400
Նուբարաշեն	40500-155000	81200	111700	110200
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	<b>40500-900200</b>	<b>164300</b>	<b>196800</b>	<b>194500</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. հուլիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ հունիսի համեմատ աճել են 1.2 % :

2006թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. հուլիսին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. հուլիս	2006թ. հուլիս	2006թ. հունիս
Արագածոտն	Աշտարակ	27000-81000	47600	65200	64200
	Ապարան	13500-36000	22100	27800	27700
	Թալին	13500-36000	22060	25100	24500
Արարատ	Արտաշատ	22500-62200	36100	49300	46600
	Մասիս	25000-62200	46700	55300	55000

	Վեղի	22500-48900	28700	38500	38500
	Արարատ	22500-53300	31900	40800	40700
Արմավիր	Վաղարշապատ	36000-111000	69900	80300	80000
	Արմավիր	22500-67500	42400	54900	53900
Գեղարքունիք	Սևան	18000-53300	28500	37700	37300
	Գավառ	9000-37800	19900	26100	26100
	Մարտունի	22200-53300	32400	40000	39800
	Վարդենիս	9000-31500	18200	22200	21700
	Ճամբարակ	4500-24400	10800	14700	14600
Լոռի	Վանաձոր	23200-92800	38500	49500	48300
	Ստեփանավան	13500-40000	26200	26500	26200
	Սպիտակ	17800-44400	23900	34500	34000
	Ալավերդի	9000-31500	17800	21900	21900
	Տաշիր	9000-31500	20200	21000	20900
	Թումանյան	4500-18000	6500	6900	6700
	Շամլուղ	2300-13500	4000	4200	4200
	Ախթալա	9000-22500	11600	11600	11600
Կոտայք	Աբովյան	31500-111000	73500	93800	91000
	Նոր Հաճն	22200-76500	52200	62300	61300
	Բյուրեղավան	22200-66600	34100	44100	43800
	Եղվարդ	22500-71100	44700	57300	56700
	Հրազդան	18000-53300	28900	36900	36200
	Ծաղկաձոր	36000-112500	54100	74900	72400
	Չարենցավան	18000-57700	34000	40300	39900
Շիրակ	Գյումրի	28200-93800	42400	49900	47900
	Արթիկ	13300-40500	24300	31100	30800
	Մարալիկ	13500-40000	21600	22900	22900
Սյունիք	Գորիս	18000-79900	41000	53800	52900
	Կապան	17800-66600	30700	41600	40600
	Սիսիան	17800-44400	25000	34500	33600
	Մեղրի	13500-40000	20900	28800	27500
	Ագարակ	13300-36000	17900	21000	21000
	Դաստակերտ	4500-18000	7500	8500	8500
Վայոց Ձոր	Վայք	17800-44400	26800	36000	35000
	Եղեգնաձոր	22200-71100	39000	54900	54000
	Զերմուկ	17800-48900	28600	36700	35700
Տավուշ	Դիլիջան	26600-66600	32300	43600	42500
	Իջևան	22200-66600	35300	51400	50400
	Բերդ	13500-44400	25300	31100	31100
	Նոյեմբերյան	9000-31500	13800	17700	17100

2006թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ հունիսի համեմետ աճել են 1.8 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1456 միավոր /1272.75 հա/ հողեր, որից Երևանում՝ 156 միավոր /33.88 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 43 միավոր /13.10 հա/ հողեր, որից Երևանում՝ 42 միավոր /13.07 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 595 միավոր /1167.14 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.23 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 524 միավոր /48.76 հա/, որից Երևանում՝ 82 միավոր /10.53 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 304 միավոր /42.91 հա/, որից Երևանում՝ 57 միավոր /16.20 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 29 միավոր /13.20 հա/, որից Երևանում՝ 14 միավոր, /6.93 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 1 միավոր /0.10 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր 3 միավոր /0.65 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,

2006թ. հուլիսին հանրապետությունում օտարված հողերից 1390 միավորի /1165.50 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 147 միավոր /29.09 հա/, նվիրատվության գործարքներ՝ 57 միավորի /105.14 հա/, որից Երևանում՝ 7 միավոր /4.32 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /2.11 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.47 հա/:

Հանրապետությունում 2006թ. հուլիսին, 2005թ. հուլիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 32.4%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 3.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 1.6 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 27-ով, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 3-ով, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ 7 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 644.87 հա, որից 636.17 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 40.6%-ը կամ 564 գործարքներ /448.16 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 64 գործարքներ /18.16 հա/, իսկ 59.4%-ը կամ 826 միավորը /717.34 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 83 միավոր /10.93 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. հուլիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	14	6.93	13	1.14	37	10.09	3	0.23	0	0.00	61	8.69	19	2.01
Արագածոտն	49	114.56	0	0.00	8	0.97	7	0.32	70	62.47	0	0.00	50	4.65	4	0.26
Արարատ	16	24.27	6	1.03	23	2.35	27	0.69	61	28.53	2	0.16	65	5.45	2	1.14
Արմավիր	36	154.82	1	0.91	3	0.25	14	0.34	84	481.35	1	2.23	55	4.62	11	0.35
Գեղարքունի	6	3.23	0	0.00	8	0.59	48	3.12	11	26.75	0	0.00	3	0.35	0	0.00

Ք																		
Լոռի	0	0.00	0	0.00	9	0.37	11	0.22	18	20.55	0	0.00	8	0.62	8	0.16		
Կոտայք	35	67.33	2	0.74	2	0.18	44	14.45	88	32.82	0	0.00	137	12.93	4	0.32		
Շիրակ	4	3.53	0	0.00	21	0.66	28	0.40	5	5.89	0	0.00	13	0.90	5	0.19		
Սյունիք	1	2.00	0	0.00	1	0.06	9	0.21	7	2.71	0	0.00	2	0.16	3	0.05		
Վայոց Ձոր	18	21.02	1	0.91	2	0.08	16	0.29	10	9.50	0	0.00	4	0.42	0	0.00		
Տավուշ	31	4.71	2	0.29	2	0.15	5	4.21	7	0.58	0	0.00	5	0.32	0	0.00		
Ընդամենը	196	395.47	26	10.81	92	6.80	246	34.34	364	671.38	3	2.39	403	39.11	56	4.48		

Ստորև ներկայացվում է 2006թ. հուլիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և ածուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Ածուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	64	18.16	14	6.93	13	1.14	37	10.09	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	64	115.85	49	114.56	0	0.00	8	0.97	7	0.32
Արարատ	10	0.90	2	0.79	0	0.00	8	0.11	62	27.45	16	24.27	4	0.25	23	2.35	19	0.58
Արմավիր	4	0.08	0	0.00	1	0.05	3	0.03	50	156.25	36	154.82	1	0.91	2	0.20	11	0.31
Գեղարքունիք	1	0.28	0	0.00	0	0.00	1	0.28	61	6.66	6	3.23	0	0.00	8	0.59	47	2.84
Լոռի	6	0.71	0	0.00	2	0.03	1	0.03	17	0.52	0	0.00	0	0.00	7	0.33	10	0.19
Կոտայք	8	2.91	0	0.00	1	0.08	7	2.83	75	79.79	35	67.33	2	0.74	1	0.10	37	11.62
Շիրակ	5	0.07	0	0.00	0	0.00	5	0.07	48	4.52	4	3.53	0	0.00	21	0.66	23	0.33
Սյունիք	5	0.10	0	0.00	0	0.00	5	0.10	6	2.17	1	2.00	0	0.00	1	0.06	4	0.11
Վայոց Ձոր	2	0.02	0	0.00	0	0.00	2	0.02	35	22.28	18	21.02	1	0.91	2	0.08	14	0.26
Տավուշ	8	4.54	2	0.29	2	0.15	4	4.10	32	4.82	31	4.71	0	0.00	0	0.00	1	0.11
Ընդամենը	113	27.77	18	8.01	19	1.45	73	17.66	450	420.31	196	395.47	8	2.81	73	5.34	173	16.67

Հանրապետությունում 2006թ. հուլիսին, 2005թ. հուլիսի համեմատությամբ, հողերի ածուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 34.6%: Ընդ որում Երևանում նվազել է 39 գործարքով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 52.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ ածուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 1.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 4.7 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 8 անգամ, հատուկ պահպանվող հողերի նկատմամբ 1 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հուլիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի ածուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	42	80.46	38.8	813.1	294.9	45	42.78	362.2	6772.5	2217.5
Ապարան						17	14.06	90.6	767.6	316.4
Թալին	7	34.10	35.0	35.0	35.0	8	5.63	90.6	758.5	312.2
Ծաղկահովիտ								77.0	948.2	153.6
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	6	11.14	38.2	1185.0	495.7	38	10.67	335.1	5418.0	1178.4
Մասիս	1	3.02	37.1	37.1	37.1	16	15.64	181.1	6772.5	1540.5
Վեդի	9	10.11	45.0	1000.0	335.6	7	2.23	203.8	4515.0	946.1
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	7	58.90	29.3	1058.8	394.5	20	23.25	294.3	4063.5	756.5
Բաղրամյան	9	63.57	20.3	597.5	112.7	18	431.85	90.6	677.3	471.0
Վաղարշապատ	20	32.35	35.4	878.0	246.7	39	24.38	443.7	9030.0	1290.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						1	2.50	190.2	496.7	317.2
Ճամբարակ	6	3.23	123.0	1733.3	752.0	3	1.08	45.3	541.8	134.5
Մարտունի						1	0.10	45.3	1806.0	443.9
Սևան								45.3	451.5	180.9
Վարդենիս						6	23.07	27.2	532.8	198.2
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						3	0.61	163.0	2483.3	343.0
Գուգարք						2	6.20	226.4	2709.0	877.5
Սպիտակ								226.4	1490.0	483.9
Ստեփանավան						8	6.57	90.6	2257.5	325.2
Տաշիր						3	3.90	45.3	451.5	195.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	8	21.47	15.3	817.5	195.7	46	12.24	271.7	11287.5	2890.5
Եղվարդ	11	30.96	36.6	2220.9	332.3	40	20.33	172.1	11287.5	2010.9
Հրազդան	16	14.90	127.3	1405.0	316.3	2	0.26	113.2	2709.0	701.9
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						3	4.00	249.0	1693.1	391.2
Ամասիա								36.2	237.0	96.9
Անի	2	3.00	85.5	85.5	85.5	1	0.60	108.7	361.2	195.7
Աշոցք								45.3	112.9	105.2
Արթիկ	2	0.53	315.0	315.4	315.2	1	1.29	63.4	1083.6	154.1
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	1.21	90.6	673.3	298.8
Կապան	1	2.00	195.5	195.0	195.0			54.3	841.6	214.6
Մեղրի						1	0.16	181.1	1784.2	416.6
Սիսիան						5	1.34	45.3	631.2	178.8
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	6	16.99	37.2	283.7	159.6	7	4.74	117.7	2524.8	1214.0
Վայք	12	4.03	105.0	1045.5	245.6	3	4.76	54.3	1430.7	473.3
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						1	0.13	45.3	841.6	317.7
Իջևան	31	4.71	400.0	1601.9	557.2			240.0	1683.2	768.0
Նոյեմբերյան						6	0.46	45.3	3509.5	440.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. հուլիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների



վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	7	8600.0	112.4	112.7	112.6	47	42517.0	113.2	3612.0	2040.3
Ապարան						2	3360.0	113.2	632.1	166.2
Թալին	1	1120.0	200.9	200.9	200.9			45.3	361.2	71.5
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	23	23457.0	143.0	563.0	377.3	16	15705.0	135.8	2709.0	744.8
Մասիս						35	25550.0	135.8	9030.0	951.2
Վեդի						11	10570.0	113.2	993.3	542.7
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						10	9590.0	135.8	2257.5	900.0
Բաղրամյան								81.5	270.9	110.1
Վաղարշապատ	2	2000.0	631.0	631.0	631.0	45	36582.0	135.8	4515.0	1239.1
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	7	4900.0	88.6	722.9	179.2	1	1350.0	135.8	903.0	313.1
Ճամբարակ	1	1000.0	110.0	110.0	110.0			45.3	135.5	75.7
Մարտունի						1	710.0	90.6	451.5	178.3
Սևան								90.6	903.0	122.0
Վարդենիս						1	1403.0	45.3	225.8	83.7
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի								67.9	270.9	96.9
Գուգարք	2	1250.0	1104.0	1725.0	1414.5	5	3450.0	67.9	2347.8	496.6
Սյիտակ						1	770.0	63.4	451.5	103.1
Ստեփանավան	5	2084.0	74.0	276.7	190.1	2	1930.0	45.3	270.9	86.2
Տաշիր								45.3	135.5	63.1
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան						70	55806.0	135.8	6772.5	1480.0
Եղվարդ						64	71060.0	135.8	6772.5	1613.5
Հրազդան	1	970.0	515.4	515.4	515.4	3	2390.0	135.8	9030.0	1045.2
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	15	4563.0	750.0	5000.0	1874.7	11	7535.0	113.2	1535.1	284.0
Ամասիա								45.3	135.5	63.1
Անի						1	1108.0	67.9	180.6	88.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	6	2058.0	65.6	880.0	367.5	1	400.0	67.9	925.6	126.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	1620.0	67.9	541.8	208.5
Կապան	1	600.0	805.0	805.0	805.0			67.9	632.1	193.6
Մեղրի								67.9	406.4	105.7
Միսիան								67.9	406.4	122.0
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	2	800.0	690.0	690.0	690.0	3	3920.0	67.9	1128.8	228.4

Վայր					1	290.0	77.0	632.1	105.2
Տավուշի մարզ									
Բերդ							45.3	632.1	80.0
Իջևան					5	3233.0	67.9	1354.5	330.1
Նոյեմբեղյան							45.3	632.1	105.2

2006թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ անհատույց սեփականաշնորհման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 634 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 50.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. հուլիսին, 2006թ. հունիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 22.4%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ՝ 28.0%-ով:

2006թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 51 բնակարանների, 39 անհատական բնակելի տների, 213 հասարակական, 31 արտադրական նշանակության օբյեկտների, 297 միավոր /3220.44 հա/ հողերի, 3 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. հուլիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 7 վարձակալության գործարքների քանակը 2006թ. հունիսի համեմատ աճել է 2.3 անգամ, իսկ 2005թ. հուլիսի համեմատ նվազել՝ 82.9%-ով:

2006թ. հուլիսին հանրապետությունում վարձակալված 3220.44 հա հողերից 0.68 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3219.76 հա հողերի 98.5%-ը կամ 3171.37 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 0.65 հա բնակավայրերի, 5.58 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 4.12 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 0.70 հա՝ անտառային, 33.89 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված, 3.44 հա՝ ջրային հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 1347.73 հա, որից 1346.53 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1715.20 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	40.0	20	238.89
Արարատ	2	130.0	8	33.98
Արմավիր	1	5.00	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	16	117.45
Լոռի	0	0.00	61	129.79
Կոտայք	0	0.00	24	269.11
Շիրակ	1	100.00	93	652.57
Սյունիք	12	1340.00	4	6.53
Վայոց Ձոր	3	100.20	0	0.00
Տավուշ	0	0.00	6	7.86
<b>Ընդամենը</b>	<b>20</b>	<b>1715.20</b>	<b>232</b>	<b>1456.18</b>

2006թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1046 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.1%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հունիսի համեմատ նվազել է 23.7%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ աճել՝ 58.0%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /55.7%/, առանձնատների /19.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.1%/ և հողերի /7.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 513 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. հունիսի համեմատ նվազել է 30.4%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ աճել է՝ 31.2%-ով:

2006թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 327.56 հա, որից 3.78 հա Երևանում: Ընդ որում հողերի 97.9% կամ 320.53 հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում 282.29 հա, որից 281.74 հա գյուղատնտեսական նշանակության:

2006թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 5 և 2 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2006թ. հունիսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 68.2%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ՝ 84.8%-ով: 2006թ. հուլիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել են Արարատի և Լոռու մարզերում՝ 26.8-ական %:

2006թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1549 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. հունիսի համեմատ նվազել է 24.3%-ով, իսկ 2005թ. հուլիսի համեմատ՝ 19.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.4%/:

## **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**